

անդրագոյնս. զմիւսն՝ հրաւիրէր եւ ստիպէր ինքնին արժանաւորութիւն հանճարոյն եւ սրբութեանն. որով եւ 'ի միջի վեհագունիցն աթոռով եւ պատուով եւ տիովք՝ վեհագոյն գտանիւր. որպէս 'ի ժողովին Հռոմկլայ կամ Տարսոնի (1179), 'ի դեսպանութիւնս առ կայսերս եւ առ այլս. եւ յայսմ իսկ ժողովի դատապարտութեան Գրիգորի Ե. որ որքան եւ արդարացի էր գործ, 'ի շինութիւն մեծի եկեղեցոյ ազգին, որոյ էին իբրեւ հարիւր եպիսկոպոսունք, ընդ անխոհեմ վարչութեամբ մանկան միոյ, սակայն եւ դժպիի էր անդամոց՝ զօծեալն եւ զմեծափառ գլուխ՝ 'ի բաց մերժել. եւ որպէս սովոր է մարդկան, մանաւանդ լեզուանեաց եւ նենգաւորաց, յայսպիսի աղիտագոյն եւ գորովախառն դէպս՝ ըստգտանել եւ երգիծանել զգործադիրսն ոմանս, զորս հեզագոյնս տեսանիցեն, մանաւանդ եթէ եւ կանխաւ խեթ ինչ ունէին ընդ նմա, սկսան եւ այժմիկ (առաւել՝ հեռաւորքն որք 'ի Մեծ Հայս) մախալ ընդ Լամբրունեցին, որպէս ծանուցանէ ինքնին գրելով համարձակ առ Լեւոն. «Այնր աւուր խաժամուծն՝ 'ի քո իշխանութենէդ զանգիտեցին, եւ զմեզ՝ նպատակ նախատանաց՝ փոխանակ քո արարին, եւ զամբոխեալ ոգիսն եւ զսնափառսն՝ ընդ ինքեանս շարժեցին». 'ի գլուխ Սրբոյն կուտելով զամենայն եպերանս՝ եթէ գոյր ինչ եպերելի: Իսկ սա՝ ոչ զյաչաղկոտացն միայն՝ այլ եւ զնորին իսկ Լեւոնի նշաւակէ աստանօր զգայթ 'ի գայթի գնացս. որ՝ երեւի իմն ըստ աշխարհիկ քաղաքական խորագիտութեան կամ անձնասիրութեան, առ 'ի թօթափել յանձնէ զամենայն ըստգիւտ, անպատասպար թողեալ զայր՝ զոր հնգակի պատգամօքն հրաւիրեաց 'ի խորհուրդ եւ 'ի գործ. եւ զի ոչ այսորիկ աղագաւ միայն, այլ եւ վասն բագում այլ ինչ իրաց՝ հեթեթանօք ամբաստանէին զՆերսէս, իբրու նորաձեւութեանց մուծիչ. փոխանակ բարեձեւութիւնս խոստովանելոյ, դարձեալ շարժեցին զԼեւոն, գէթ 'ի վերին երեսս, երկմտել իմն 'ի նմանէ, զոր գերահանճար քան զամենեսին յուխտի եկեղեցոյն ճանաչէր, զոգջիր եւ քան զճարտարագոյնս 'ի քաղաքայնոցն, որպէս եւ ինքն քաջ քան յայլոց՝ 'ի նմանէ կշռադատեալ լինէր զարժանեացն. եւ երկիցս գրեաց առ Սուրբն եւ Սիրելին, համարս իմն պահանջելով եւ պատասխանիս զամբաստանութեանցն եղելոց, իբրու 'ի հեռուստ լսելով, 'ի Հաղբատայ եւ 'ի Քոբայրայ, եւ յանկարծոյն իմն անտես լինելով նորայոցն ակնյայտնի եւ մերձաւոր գործոց ուղղութեանց: Ստիպեցաւ Սուրբն լուծանել մի անգամ եւս զպարկեշտ լռութիւնն, եւ ոչ առ ամբաստանողսն չարալեզուս, այլ առ ունկնդիր բամբասանացն՝ առ Լեւոն